Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը
Թվինինգ Ծրագրի Միջոցով

AM09/ENP-PCA/TP/04

Առաքելության Զեկույց

Հարցերի պարզաբանում և սահմանումներ

Գործունեություն Բ 1

Առաքելությունը իրականացրել են՝
Տիկին Վիբեկը Սկով Մուլլեր, գլխավոր խորհրդատու
Պարոն Քարստըն Զորնիգ, բաժնի պետի տեղակալ
Պարոն Սորեն Շյոննինգ Անդերսեն, բաժնի ղեկավար

Հայաստան, 28 մարտի- 1 ապրիլի, 2011

Տարբերակ. Վերջնական

National Statistical Service
Republic of Armenia

Statistics Denmark

Հեղինակների անունները, հասցեները և էլեկտրոնային փոստի հասցեները

Տիկին Վիբեկը Սկով Մուլլեր, գլխավոր խորհրդատու
Դանիայի Վիճակագրություն, Բիզնես ռեգիստրի բաժին
Sejrøgade 11
DK-2100 København Ø
vsm@dst.dk

Պարոն Քարստըն Զորնիգ, բաժնի պետի տեղակալ
Դանիայի Վիճակագրություն, Տվյալների հավաքագրման և մեթոդաբանության բաժին
Sejrøgade 11
DK-2100 København Ø
czo@dst.dk

Պարոն Սորեն Շյոննինգ Անդերսեն, բաժնի ղեկավար
Արտաքին առևտրի և վճարային հաշվեկշռի բաժին
Sejrøgade 11
DK-2100 København Ø
ssa@dst.dk

Բովանդակություն

0. Ամփոփ նկարագիր 4
1. Ընդհանուր մեկնաբանություններ 5
2. Գնահատում և արդյունքներ 5
2.1 Բիզնես Ռեգիստր 6
2.2 Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն 7
3. Եզրակացություններ և առաջարկներ 9
3.1 Եզրակացությունների ամփոփում 9
3.2 Առաջարկներ 10
4. Հաջորդ գործունեությունից առաջ իրականացվող քայլեր (Բ2) 12

Կից ներկայացված հավելվածներ

Հավելված 1 Տեխնիկական առաջադրանք 14
Հավելված 2 Առաքելության ծրագիրը 15
Հավելված 3 Անձինք, որոնց հետ հանդիպումներ են տեղի ունեցել 16
Հավելված 4 ՎԲՌ և ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցման փաստերի հավաքագրման ամփոփում 17
Հավելված 5 ՀՀ ԱՎԾ –ի պետական վիճակագրության դիտարկման հարցաթերթիկ 26
Հավելված 6 Վիճակագրական բիզնես ռեգիստրի հարցաթերթիկ (տարեկան) 29
Հավելված 7 Ա Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափում 31
Հավելված 7Բ Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցում 34
Հավելված 7 Գ Լրացուցիչ հարցաթերթիկի օրինակ 35

Այլ հավելվածներ, որոնք հավաքվել կամ կազմվել են զեկույցի համար

Հավելված Բ 1.8 Բիզնես ռեգիստրի ընդհանուր ներածություն
Հավելված Բ 1.9 Սեմինար ՎԲՌ-ի շահառուների հետ
Հավելված Բ1.10 Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն

Հապավումների ցանկ

ԵՄ	Եվրոպական Միություն
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՎԲՌ	Վիճակագրական Բիզնես Ռեգիստր
ԿԲՀ	Կառուցվածքային Բիզնես Հետազոտություն
ՍԾՄ	Ստանդարտ Ծախսերի Մոդել
ԴՎ	Դանիայի Վիճակագրություն

0. Ամփոփ Նկարագիր

Բաղադրիչ Բ ներառում է հետևյալ նպատակները՝ 1) Որոշել և գնահատել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը; 2) բարելավել բիզնես հետազոտությունների հաշվետվական ձևերը, և 3) սահմանել և ընդունել ՎԲՌ –ի վերակազմավորման ռազմավարությունը՝ առավել լավ ընդգրկման և արդիականացման համար:

Սույն առաքելությունը Բ 1 բաղադրիչի առաջին գործունեությունն էր, որը իրականացվեց Բ 3.1 գործունեության հետ միաժամանակ և ուղղված էր հաշվետվական ձևերի վրա՝ այսինքն ընդհանուր "փաստահավաք" առաքելություն էր: Հիմնական նպատակները հետևյալն էին՝ 1) ՀՀ ԱՎԾ-ի առկա ՎԲՌ-ի վերլուծություն, 2) Կառուցվածքային Բիզնես Հետազոտության ընթացիկ հաշվետվական ձևերի վերլուծություն, 3) համաձայնություն, թե ինչպես պետք է չափել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը, 4) Տեղեկացնել արտաքին շահառուներին աշխատանքների վերաբերյալ: Սույն զեկույցը կենտրոնացած է 1, 3 և 4 կետերի վրա:

Ընդհանուր եզրակացությունն այն է, որ ստեղծվել են բավականին լավ աշխատանքային հարաբերություններ և համաձայնություն է ձեռք բերվել կիրառելու Ստանդարտ Ծախսերի Մոդելի սկզբունքները՝ ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման համար: Չնայած որ, հաստատվել է բաղադրիչի ընդհանուր նախագիծը, մենք ենթադրում ենք, որ նախաձեռնությունները կշարունակվեն նաև ծրագրի տևողության ավարտից հետո՝ հաշվի առնելով կախվածությունը արտաքին գործոններից: ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցները ցուցաբերեցին դրական և կառուցողական մոտեցում և հետաքրքրություն:

Ռեսպոնդետների ծանրաբեռնվածության վերաբերյալ հիմնական եզրահանգումն այն էր, որ համաձայնություն ձեռք բերվեց հետևյալ հարցերի շուրջ՝ 1) ձեռք բերվեց համաձայնություն նպատակների իրականացման համար անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ, 2) բազիսային չափման իրականացման վերաբերյալ, և 3) մեթոդաբանության հիմնավորումը Ստանդարտ Ծախսերի Մոդելի (ՍԾՄ) սկզբունքների վրա: ԱՊ փորձագետները առաջարկում են, որ ՀՀ ԱՎԾ-ի ղեկավարությունը պաշտոնապես հաստատի ՍԾՄ-ի ընտրությունը, որպես մեթոդ և բազիսային չափումը իրականացվի սահմանափակ թվով ներկայացուցչական հետազոտությունների և ձեռնարկությունների վրա:

ՎԲՌ-ի վերաբերյալ եզրահանգումները հետևյալն են՝ 1) ընդգրկելով միայն սահմանափակ ձեռնարկություններ՝ ՎԲՌ –ը բավականին հեռու է համապարփակ և հաջորդական ընտրանքային շրջանակ լինելուց, 2) հասցեների ոչ բավարար որակը էական խնդիր է հանդիսանում , 3) գործունեության կոդի արտաքին աղբյուրի բացակայությունը խնդիր կլինի երբ միավորների ընդգրկումը նաև տարածվի մասնավոր ձեռնարկությունների վրա, 4) հայտնի չէ, թե ներկայիս տեղեկատվությունը տեղական միավորների վերաբերյալ որքանով է համապատասխանում ՀՀ ԱՎԾ –ի ակնկալվող ապագա կարիքներին աշխարհագրորեն տեղաբաշխված ձեռնարկությունների վիճակագրության համար, և 5) հայտնի չէ, թե արդյոք կան բավարար ռեսուրսներ ՎԲՌ-ի ծրագրերի մշակման համար: ԱՊ փորձագետները առաջարկում են, որ առաջինը նախ պետք է որոշվի մասնավոր ձեռնարկությունների և պետական սեկտորի միավորների ներառումը և վերլուծել, թե կան

արդյոք հասանելի տվյալներ, և թե ինչպես այդ ներառումը կանդրադառնա ՎԲՌ-ի համակարգի վրա: Երկրորդ, անհրաժեշտ է պարզել, թե արդյոք առկա տվյալների մոդելը համապատասխանում է ՀՀ ԱՎԾ-ի ներկա և ակնկալվող կարիքներին տեղական միավորների տվյալների համար, ինչպես նաև քննարկել համապատասխան այլ ՀՀ կառավարական հաստատությունների հետ, թե արդյոք նրանք շահագրգռված են տեղական միավորների գրանցման հարցում: Երրորդ, անհրաժեշտ է վերլուծել թե ինչպես ՀՀ ԱՎԾ-ն կարող է <<պաշտպանել>> իր իսկ կողմից արված հասցեների ուղղումները, որպեսզի դրանք չլինեն կրկնակի գրառված և հնարավոր է արդյոք առավել հաճախակի տվյալներ ստանալ Հարկային մարմիններից: Բացի այդ, հնարավոր է քննարկումներ իրականացնել այլ համապատասխան կառավարական հաստատությունների հետ, եթե կա հիմք ՀՀ –ում պաշտոնական <<հասցեների ռեգիստր>> ստեղծելու համար: Չորրորդ, ՀՀ ԱՎԾ-ն պետք է շարունակի քննարկումները/ջանքերը որպեսզի NACE կոդերը վերագրվեն հարկային ծառայություններին: Վերջապես, պետք է գնահատվի ռեսուրսների անհրաժեշտությունը՝ կապված SS զարգացման ծրագրերի և ընթացիկ սպասարկման հետ՝ առավել մեծ ընդգրկում ապահովելու համար:

Հաջորդ գործունեությունը (Բ 2) տեղի կունենա 2011 թվականի Հունիս ամսին, ինչպես և պլանավորված էր, և մի քանի հաջորդական գործողություններ պետք է իրականացվեն ՀՀ ԱՎԾ-ի կողմից, որպեսզի այդ գործունեությունը լինի առավել արդյունավետ:

1.Ընդհանուր մեկնաբանություններ

Առաքելության զեկույցը պատրաստվել է սույն Թվինինգ ծրագրի շրջանակներում՝ <<***Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը Թվինինգ Ծրագրի Միջոցով***>>: Այս ծրագրի շրջանակներում ՀՀ ԱՎԾ-ն որոշել է որպես բաղադրիչ Բ-ի ընդհանուր նպատակ իրականացնել հաշվետվությունների ծանրաբեռնվածության նվազեցումը, Բիզնես Ռեգիստրի, Կառուցվածքային Բիզնես Հետազոտությունների և Հաշվետվությունների Ծանրաբեռնվածությանը վերաբերվող հարցերը: Սա ներառում է մի քանի նպատակներ:

- Որոշել և գնահատել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը
- Բարելավել բիզնես հետազոտությունների հաշվետվական ձևերը
- Սահմանել և ընդունել ռազմավարություն ՎԲՌ –ի վերակազմավորման համար՝ առավել լավ ընդգրկում և արդիականություն ապահովելու համար, առաջնայնորեն հիմնված լինելով ադմինիստրատիվ ռեգիստրից ստացված տվյալների վրա:

Այս առումով, գործունեությունները ի սկզբանե բաղադրիչ Բ –ի շրջանակներում էր, այսինքն ընդհանուր <<փաստահավաք>> առաքելության շրջանակներում: Սույն գործունեությունները կնպաստեն վերը նշված նպատակներին հասնելու համար և համեմատական վերլուծություններ իրականացնել Բ 1 գործունեության համար՝ ինչպես և նշված է պայմանագրում***: Առկա է համաձայնություն, թե ինչպես պետք է հաշվարկել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը Կառուցվածքային Բիզնես Հետազոտության համար:***

Կոնկրետ նպատակները/առաքելության ականկալվող արդյունքները, որոնք ներառված են հավելված 1-ում, հետևյալն են՝

- ՀՀ ԱՎԾ-ի առկա Բիզնես Ռեգիստրի վերլուծություն;
- Համաձայնություն, թե ինչպես պետք է չափել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը;
- Արտաքին շահառուների տեղեկացում իրականացվող աշխատանքների վերաբերյալ;
- Հաջորդ գործունեության ծրագրի մշակում (Բ2);
- Որոշել հաջորդ գործունեության նախընտրելի ժամանակահատվածը (Բ2):

ԱՊ Փորձագետները ցանկանում են արտահայտել իրենց անկեղծ շնորհակալությունը բոլոր այն պաշտոնյաներից և անհատներից, որոնց հետ նրանք հանդիպումներ են ունեցել, իրենց բարյացակամ աջակցության և արժեքավոր տեղեկատվության համար, որը ցուցաբերվեց փորձագետներին Հայաստանում գտնվելու ժամանակ, և որը մեծապես նպաստեց ԱՊ փորձագետների աշխատանքին:

Սույն զեկույցում նշված տեսակետները և դիտողությունները պատկանում են ԱՊ փորձագետներին և բոլորովին պարտադիր չէ, որ դրանք համապատասխանեն, ԵՄ-ի, ՀՀ ԱՎԾ-ի կամ Դանիայի Վիճակագրության տեսակետների հետ:

2. Գնահատում և արդյունքներ

Սույն զեկույցի դիտողությունները կազմվել են ՀՀ ԱՎԾ -ում ղեկավարների և աշխատակազմի հետ ունեցած հարցազրույցների և քննարկումների արդյունքում, որոնք տեղի են ունեցել առաքելության հանդիպումների և սեմինարների ընթացքում: Սույն զեկույցում նշված դիտողություններից շատերը պետք է վերլուծել և քննարկել առավել մանրամասնորեն հաջորդ գործունեությունների ժամանակ, ինչպես նաև անհրաժեշտ է ավելի շատ տեղեկատվություն, որը պետք է տրամադրվի ՀՀ ԱՎԾ –ի աշխատակիցներին և ԱՊ փորձագետներին հնարավորինս սեղմ ժամկետներում:

Ընդհանուր առմամբ, ԱՊ փորձագետները գտնում են, որ ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցները, որոնք մասնակցություն են ունեցել այս գործունեության մեջ, ցուցաբերել են դրական և կառուցողական հետաքրքրություն և նվիրվածություն այս բաղադրիչի հանդեպ, ինչպես նաև՝

- պատկերացում և ունակություններ՝ կապված ՎԲՌ-ում և բիզնես հետազոտությունների իրականացման համար հիմնական բիզնես տվյալների (նույնականացման տվյալներ) կառավարման հետ;

- Իրազեկություն ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցման անհրաժեշտության վերաբերյալ՝ ներառյալ ադմինիստրատիվ աղբյուրների օգտագործման առավելությունները:

Հաստատվեց և մանրամասնվեց այս բաղադրիչի աշխատանքային պլանը:

ՀՀ ԱՎԾ –ի ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման ընդհանուր մեթոդների շուրջ համաձայնություն ձեռք բերվեց:

2.1 Բիզնես Ռեգիստր

Հանդիպում պարոն Գագիկ Անանյանի հետ, Բիզնես Վիճակագրության բաժնի ղեկավար

Պրն. Անանյանի հետ հանդիպումը տեղի ունեցավ երկուշաբթի օրը, որի նպատակն էր ԱՊ փորձագետներին ներկայացնել ՎԲՌ-ի ընդհանուր նկարագիրը, ներառյալ ՎԲՌ հարցման համակարգը և զարգացման նպատակները: Սույն հանդիպման եզրահանգումները զետեղված են հավելված 4 ում: Հանդիպմանը մասնակցում էին ինչպես Բ 1 բաղադրիչի, այնպես էլ՝ Գ 1 բաղադրիչի փորձագետները:

Պրն. Անանյանի հետ տեղի ունեցավ նաև հաջորդական հանդիպում երեքշաբթի օրը, որի նպատակն էր պարզաբանել ՎԲՌ-ի զարգացման ընդհանուր նպատակները՝ նախքան արտաքին շահառուների հետ հանդիպում ունենալը: Հանաձայնություն ձեռք բերվեց, որ կարևոր է ընդլայնել ադմինիստրատիվ աղբյուրների կիրառումը ՎԲՌ-ի բարելավման համար: Անհրաժեշտ է նաև ընդլայնել ՎԲՌ-ը՝ ընդգրկելով Հայաստանի տնտեսության բոլոր ոլորտները, ներառյալ՝ անհատ ձեռներեցների ձեռնարկությունները և պետական սեկտորը: Չնայած որ գյուղատնտեսության ոլորտի ձեռնարկությունները մեծ թիվ են կազմում, սա այս պահին կդիտարկվի որպես տնային տնտեսությունների սեկտորի մի մաս, ուստի գյուղատնտեսության սեկտորը այս փուլում ընդգրկված չէ լինի ՎԲՌ-ում:

Նշվեցին ադմինիստրատիվ տվյալների որակի հետ կապված խնդիրները, հատկապես դրոնք առնչվում են սխալ հասցեների հետ:

Սեմինար ՎԲՌ բաժնի և ներքին սպառողների հետ՝ ներկայացնելով ՎԲՌ-ի վերաբերյալ ԵՄ չափանիշները

Շեշտը դրված է բիզնես վիճակագրության համապարփակ համակարգ արտադրելու վրա՝ կիրառելով ստանդարտացված միավորներ, դասակարգումներ և շարունակաբար սահմանված հիմնական փոփոխականներ, ինչպես նաև փաստարկներ կենտրոնացված ՎԲՌ օգտագործելու վերաբերյալ: Ներկայացվեց Դանիայի ՎԲՌ-ը՝ շեշտը դնելով գրանցման ընթացակարգերի և ադմինիստրատիվ աղբյուրների վրա: Ներկայացված սլայդերը զետեղված են հավելված Բ1.8-ում (առանձին PPT պրեզենտացիա): Հիմնական թեմաները հետևյալն էին՝

- Նախադրյալներ բիզնես վիճակագրության արտադրության համար ՎԲՌ –ի ստեղծման և օգտագործման համար:
- Վիճակագրական բիզնես միավորների և ՎԲՌ-ի ԵՄ չափանիշները:
- Դանիայի ՎԲՌ –ի ընդհանուր ներկայացում՝ շեշտը դնելով գրանցման ընթացակարգերի և ադմինիստրատիվ աղբյուրների վրա: Ակնարկ արվեց Դանիայի փորձառության վերաբերյալ, երբ քննարկումներ էին ընթանում պաշտոնյաների միջև (Հարկային ինչպես նաև Դանիայի Կոմերցիայի ծառայություններ և Ձեռնարկությունների Գործակալություն) և ԴՎ: Բավարար փաստարկներով հնարավոր է հավաստիացնել պաշտոնյաներին՝ ներառելու տեղեկատվություն օրինակ տեղական միավորների վերաբերյալ: Նշվեց նաև տվյալների փոխանակման կարևորությունը տարբեր մարմինների և ԴՎ-ն միջև, միաժամանակ նշվեց որ ԴՎ –ում գաղտնի տեղեկատվության կոնֆիդենցիալության ապահովումը շատ կարևոր է:

Հանդիպում ՎԲՌ թիմի հետ

Բավականին հաճելի և արդյունավետ հանդիպում տեղի ունեցավ ՎԲՌ թիմի հետ, որտեղ առավել մանրամասնորեն ներկայացվեց ՎԲՌ հարցման համակարգը ՀՀ ԱՎԾ-ում: ՎԲՌ թիմը տեղեկացրեց ԱՊ փորձագետներին կրկնակի գրանցման, ներդաշնակեցման խնդիրների հետ կապված մարտահրավերների վերաբերյալ, որոնք առաջանում են աղբյուրների ռեգիստրներում տարբեր նույնականացման կոդերի կիրառման պատճառով:

ՀՀ ԱՎԾ-ի համար օգտակար կլինի ՎԲՌ –ի վերաբերյալ վերապատրաստումը և գիտելիքների փոխանակումը այլ երկրների հետ, ներառյալ ԵՄ չափանիշների իրականացման տարբեր եղանակների վերաբերյալ: Նաև արդյունավետ կլինի Հայաստանում ՎԲՌ –ի թիմի համար տեղեկություններ ստանալ տերմինաբանության և ԵՄ սահմանումների վերաբերյալ:

Սեմինար արտաքին շահառուների ,ՎԲՌ-ի թիմի և ՎԲՌ-ի ներքին սպառողների հետ

Սեմինարի նպատակն էր ներկայացնել Դանիայի փորձառությունը տարբեր մարմինների միջև տվյալների փոխանակման վերաբերյալ, որոնք պատասխանատու են բիզնես միավորների գրանցման համար: Ներկայացված սլայդերը զետեղված են հավելված Բ1.9-

ում (առանձին PPT պրեզենտացիա): Սեմինարը վերաբերվում էր տվյալների աղբյուրներին, որոնք ՎԲՌ առաջնային շահառուներն են և հետազոտությունների համար դրանցից օգտվողներին, որոնք ՀՀ ԱՎԾ –ի ներքին սպառողներն են:

ՎԲՌ առաջնային հետաքրքրության թեմաները *արտաքին շահառուների* համար հետևյալն էին՝

- Ինչու է կարևոր իրավաբանական միավորների (և տեղական միավորների) վերաբերյալ հիմնական տեղեկատվության վերաօգտագործումը: Առկա է քաղաքական ճնշումը (ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցում, ծախսերի կրճատում և առավել լավ որակի ապահովում): Բոլորը կօգտվեն այս մոտեցումից՝ ընդհանուր հետաքրքրություններ և շահույթ:
- Եզակի չափորոշիչների կարևորություն, ինչպիսիք են անհատական համարները, իրավաբանական միավորի համարը և հասցեների կոդերը (քաղաքապետարանի համարը, փողոցի համարը, տան համարը):
- Անձանց և ձեռնարկությունների պարտավորություններ՝ գրանցելու համար իրենց տեղեկատվությունը և այն պարբերաբար արդիականացնելու համար:
- Կարևոր է համաձայնություն գալ, թե որ տվյալները կարող են հասանելի լինել հանրության համար և որ տվյալներն են գաղտնի: Անհրաժեշտ է ձեռք բերել հուսալիություն և հանրության վստահությունը: Կարևոր է նաև իմանալ, որ միայն ԴՎ-ը կարող է համատեղել ամբողջ տեղեկատվությունը և հնարավոր չէ տրամադրել անհատ անձանց կամ իրավաբանական միավորների վերաբերյալ որևէ տեղեկատվություն որևէ մեկին՝ ԴՎ –ից դուրս:

Քննարկումներ տեղի ունեցան նաև հասցեների կոդերի օգտակարության վերաբերյալ: Նաև քննարկվեցին նույնականացման համարները և պարզ դարձավ, որ նույնականացման համարները կարևոր են ինչպես սպառողների, այնպես էլ մատակարարների համար: Ակնհայտ է նաև, որ անհրաժեշտ է ընդհանուր ռազմավարություն, սակայն բավականին մեծ առաջընթաց քայլ կլինի օգտվել ՀՀ –ում վերջերս ընդունված օրենքների արդեն իսկ տրամադրված հնարավորություններից:

ՎԲՌ –ի *ներքին սպառողների* առաջնային հետաքրքրության թեմաները հետևյալն էին՝

- ՎԲՌ –ը հետազոտությունների նպատակով հինգ հիմնական տարրերի օգտագործումը՝ ամբողջական ընդգրկում, բարձր որակ, ստանդարտացում, ծախսարդյունավետություն և համակարգում, և ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցում:

2.2 Ռեսպոնդենտների ծանրաբեռվածություն

Հանդիպում մեթոդաբանության թիմի հետ

Հանդիպում տեղի ունեցավ ՀՀ ԱՎԾ մեթոդաբանության թիմի հետ, որպեսզի ներկայացվեն ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության հետ առնչվող տեսությունները և գործնական աշխատանքները: Ներկայացվեց ադմինիստրատիվ ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման ընդհանուր մոդելը և ցույց տրվեց, թե ինչպես պետք է գործնականում իրականացնել այդ հաշվարկները: Ներկայացված սլայդերը զետեղված են հավելված Բ1.10-ում (առանձին PPT պրեզենտացիա): Ավելին, ներկայացվեցին նաև համապատասխան ընթացակարգեր՝ կապված ծանրաբեռնվածության փաստացի նվազեցման աշխատանքների հետ:

Հանդիպում պարոն Գագիկ Անանյանի հետ, Բիզնես Վիճակագրության բաժնի ղեկավար

Մեկ այլ հանդիպում տեղի ունեցավ պարոն Անանյանի հետ, որի նպատակն էր պարզաբանել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցման ընդհանուր նպատակները Թվինինգ ծրագրի շրջանակներում: Համաձայնություն ձեռք բերվեց, որ անհրաժեշտ է ավելի շատ ցուցաբերել պրագմատիկ մոտեցում, քան կենտրոնանալ նպատակների վրա, որոնք հնարավոր է հասանելի չլինեն: Ուստի որոշվեց, որ ծրագրի ժամանակահատվածի ավարտին նախաձեռնություններ կսահմանվեն՝ կապված ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցման հետ: Ինչևէ այդ նախաձեռնությունների իրականացումը պարտադիր պայման չէ:

Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման նպատակները

Սույն ծրագրի շրջանակներում ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցման ընդհանուր նպատակն է բացահայտել ծանրաբեռնված ոլորտները և նկարագրել, թե այդ ոլորտներից որոնք պետք է ենթարկվեն ծանրաբեռնվածության նվազեցմանը: Ընդհանուր նպատակն է նվազեցնել ամբողջ ծանրաբեռնվածությունը մոտավորապես 20 տոկոսով:

Այս նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է որոշակի նախապայմանների իրականացումը՝

- Պետք է հաշվարկվի առկա իրավիճակում ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափումը
- Բացահայտված ծանրաբեռնվածությունը պետք է տարանջատել բաղադրիչների և վերլուծել
- Պետք է որոշվեն, թե որոնք են հատուկ ծախսատար ծանրաբեռնվածությունները
- Առավել ծախսատար ծանրաբեռնվածությունները պետք է մանրամասնորեն վերլուծել

Մինչ այժմ ՀՀ ԱՎԾ-ի կողմից միայն իրականացվել է ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման սահմանափակ փորձ: Այս ոլորտում փորձը անհրաժեշտ

նախապայման է՝ ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը բացահայտելու և նվազեցնելու համար:

Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության բազիսային չափում

Անհրաժեշտ է իրականացնել վիճակագրության ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության բազիսային չափումը: Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափումը չափազանց կարևոր խնդիր է, որպեսզի հետագայում հնարավոր լինի շարունակելու ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցման անհրաժեշտ առաջադրանքները: Սա անհրաժեշտ է՝ Թվինինգ ծրագրի այս բաղադրիչի նպատակը իրականացնելու համար: Այս առաքելության շրջանակներում ներկայացվեց ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության հաշվարկը, տես հավելված 7 Ա:

Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման պարզ եղանակ է՝ որոշել այն ժամանակը, որը ծախսվել է հարցաթերթիկը լրացնելու համար յուրաքանչյուր բիզնես հետազոտությունների համար: Այս ժամանակահատվածը պետք է հիմք հանդիսանա ընդհանուր ժամանակահատվածի հաշվարկման համար, որոնք ծախսել են ձեռնարկությունները բոլոր բիզնես հետազոտությունների լրացման համար: Հարցաթերթիկները լրացնելու վրա ծախսված ժամանակահատվածը ներառում է ինչպես հարցաթերթիկները լրացնելու համար ծախսված ժամանակահատվածը, այնպես էլ այն ժամանակահատվածը, որը ձեռնարկությունը ծախսել է համապատասխան տեղեկատվությունը գտնելու համար:

Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը պետք է չափել՝ օգտագործելով փուլային մոտեցումը՝

1. Սահմանել ներկայացուցչական հետազոտություններ
2. Որոշել ձեռնարկությունների թիրախային խմբերը
3. Հաշվարկել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը

Հավելված 7 Բ-ում մեջբերված է մոդելի մանրամասն նկարագիր, թե ինչպես պետք է իրականացվի ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափումը:

Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցում

Երբ որ հաշվարկվի ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման *բազիսային* չափումը, կարելի է սկսել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցման աշխատանքների իրականացումը: Սույն առաքելության շրջանակներում ներկայացված ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցման աշխատանքների մոտեցումը զետեղված է հավելված 7 Ա-ում:

Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության աշխատանքների նպատակը պետք է ապահովի, որ՝

- Առկա ծանրաբեռնվածությունը բացահայտվի

- ծանրաբեռնվածությունները տարանջատվեն բաղադրիչների և ենթարկվեն վերլուծությունների
- մասնավորապես ծախսատար ծանրաբեռնվածությունները պետք է որոշվեն
- առավել ծախսատար ծանրաբեռնվածությունները պետք է քննարկվեն մանրամասնորեն

Այս ոլորտի առաջին քայլը պետք է լինի ապահովել, որ ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցման հետ կապված աշխատանքները ունենան կայուն և ներքին սահմանված կարգապահական կանոններ ընկերությունում: Ավելին, անհրաժեշտ է, որ աշխատանքը վերահսկվի ՀՀ ԱՎԾ-ի բարձրաստիճան ղեկավարների կողմից, քանի որ ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցումը կարող է մարտահրավեր հանդիսանալ և փոփոխել կազմակերպության ընթացիկ առօրյա աշխատանքային գործընթացները:

Այս փուլի հետ կապված որոշումների կայացումը պետք է ամենայն հավանականությամբ վերանայվի մինչև այս բաղադրիչի հաջորդ առաքելությունը: Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցման աշխատանքների փուլային մոդելի մանրամասն նկարագրությունը ներկայացված է հավելված 7Բ-ում:

3. Եզրակացություններ և առաջարկներ

3.1 Ամփոփ եզրակացություններ

Բիզնես ռեգիստր

Հիմնական մարտահրավերները, բարելավման ենթակա ոլորտները կամ ԵՄ չափանիշներին չհամապատասխանող ոլորտները հետևյալն են՝

1. Միայն սահմանափակ ընկերությունների ընդգրկումը, մասնավոր ձեռնարկությունների (անհատ ձեռնարկատերեր), պետական սեկտորի միավորների և հավանաբար առավել մեծ գյուղացիական տնտեսությունների բացակայությունը նշանակում է, որ ՎԲՌ ներկայումս հեռու է համապարփակ և կապակցված ընտրանքային շրջանակ լինելուց և այն լրջորեն խոչընդոտում է ՎԲՌ որպես հետազոտությունների շրջանակ կիրառելու հնարավորությանը:

2. ՎԲՌ հասցեների որակը բավարար չէ. հաշվարկված է, որ մոտավորապես 40 տոկոսը հասցեների սխալ է: Սա խոչընդոտում է ՎԲՌ հուսալիությանը, տվյալների հավաքագրման ծախսարդյունավետությանը և կարող է նաև բացասաբար անդրադառնալ վիճակագրական արտադրության ճշգրտության վրա:

3. Գործունեության կոդերի վերաբերյալ չկան արտաքին տվյալների աղբյուրներ: Ներկայումս (այսինքն, միայն ունենալով 15.000 միավորներ ՎԲՌ-ում) սա այդքան էլ մեծ խնդիր չէ, սակայն եթե ընդգրկումը տարածվի նաև տնային տնտեսությունների սեկտորից դուրս գտնվող բոլոր տնտեսական սուբյեկտների վրա, սա կարող է լրջորեն նվազեցնել ՎԲՌ –ի արդյունավետությունը:

4. Տվյալների մոդելը բաղկացած է ընդամենը մեկ միավորի տեսակից՝ իրավաբանական միավոր: Պարզ չէ, թե որքանով է տեղական միավորների վերաբերյալ առկա տեղեկատվությունը համապատասխանում ՀՀ ԱՎԾ-ի ապագա կարիքներին՝ աշխարհագրորեն տեղաբաշխված բիզնեսի վիճակագրության համար:

5. Եթե ՀՀ ԱՎԾ-ն որոշում կայացնի անդրադառնալ այս մարտահրավերներին, ՎԲՌ –ին հատկացված առկա ռեսուրսները ՀՀ ԱՎԾ-ում բավարար չեն լինի կառավարելու նման զարգացման ծրագրերը՝ ընթացիկ աշխատանքների իրականացման հետ համատեղ:

Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն

1. Համաձայնություն ձեռք բերվեց ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցման առնչությամբ Թվինինգ ծրագրի նպատակների մեկնաբանման վերաբերյալ: Ընդհանուր հայտարարը եղավ այն, որ պետք է ստեղծվի մեթոդաբանություն և նախաձեռնություններ, որոնք կհանգեցնեն ռեսպոնդենտների առկա ծանրաբեռնվածության նվազեցվմանը՝ մոտավորապես 20 տոկոսով, որը պետք է որոշվի ՀՀ ԱՎԾ-ի կողմից: Այնուամենայնիվ, այս նախաձեռնությունների իրականացումը պարտադիր չէ ավարտին հասցնել այս ծրագրի ժամանակահատվածի ընթացքում:

2. Որոշվեց, որ ծրագրի ընթացքում պետք է իրականացվի <u>առկա</u> ծանրաբեռնվածության բազիսային չափումը:

3. Որոշվեց, ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման համար հիմք ընդունել Ստանդարտ Ծախսերի Մոդելի սկզբունքները:

3.2 Առաջարկներ

Բիզնես ռեգիստր

Ընդգրկման ընդլայնում

- **Ներքին ՀՀ ԱՎԾ.** ՀՀ ԱՎԾ –ին առաջարկվում է քննարկել և որոշել, թե արդյոք մասնավոր ձեռնարկությունները և պետական սեկտորի միավորները պետք է ընդգրկվեն ՎԲՌ-ում:
- **Արտաքին մարմինների հետ կապված**՝ Եթե որոշում ընդունվի ներառել մասնավոր ձեռնարկությունները և պետական սեկտորի միավորները, ապա ՀՀ ԱՎԾ-ին առաջարկվում է ՝
  - քննարկել տվյալների տրամադրման հնարավորությունները առնվազն Իրավաբանական անձանց Պետական ռեգիստրից և Հարկային ռեգիստրից,
  - քննարկել բիզնես միավորներին գործունեության կոդերի վերագրումը, երբ նրանք նախնական գրանցվում են Իրավաբանական անձանց Պետական ռեգիստրում կամ Հարկային ռեգիստրում և դրանց հաջորդական արդիականացումը՝ ըստ անհրաժեշտության,
  - վերլուծել, թե ինչպիսի փոփոխություններ այն կարող է ենթադրել առկա ՎԲՌ արդիականացման համակարգի համար:

Հասցեների որակը՝

- **Ներքին ՀՀ ԱՎԾ՝** ՀՀ ԱՎԾ –ին առաջարկվում է վերլուծել, թե ինչու է հասցեների որակը ոչ բավարար և ուսումնասիրել, թե արդյոք առավել շատ հետազոտությունների տեղեկատվությունը կարող է օգտակար լինել ՎԲՌ արդիականացման համար:
- **Արտաքին մարմինների հետ կապված՝** ՀՀ ԱՎԾ –ին առաջարկվում է՝

- քննարկել առավել հաճախ տվյալների տրամադրումը Հարկային մարմինների կողմից, որոնք ունեն գործունեության հասցեները, և որը կարող է նվազեցնել հասցեների անճշտությունների տոկոսը, և
- Կապեր հաստատել Հայաստանի այլ պետական մարմինների հետ, որոնք հետաքրքրված են հասցեների տվյալների բարձր որակով, նպատակ ունենալով՝ ուսումնասիրել եզակի հասցեների պաշտոնական ռեգիստր ստեղծելու հնարավորությունները (այսինքն՝ ամբողջությամբ թվային կոդեր)

ՎԲՌ ընդլայնումը տեղական միավորներով

- **Ներքին ՀՀ ԱՎԾ.** ՀՀ ԱՎԾ –ին առաջարկվում է քննարկել և հստակեցնել, թե արդյոք առկա տվյալների մոդելը համապատասխանում է իրենց ընթացիկ և ակնկալվող պահանջներին: Եթե ՀՀ ԱՎԾ-ն ցանկանա ընդգրկել տեղական միավորները որպես առանձին միավոր, ապա ՎԲՌ տվյալների մոդելը պետք է փոփոխվի:
- **Կապված արտաքին մարմինների հետ**՝ առաջարկվում է ՀՀ ԱՎԾ-ին քննարկել այլ համապատասխան կառավարական հաստատությունների հետ, թե արդյոք նրանք հետաքրքրված են տեղական միավորների գրանցմամբ:

ՎԲՌ առկա ռեսուրսները.

- Եթե այս *զարգացման ծրագրերը* որոշվեն, ապա առաջարկվում է, որ ՀՀ ԱՎԾ քննարկի և որոշի, թե ինչպես և երբ պետք է հատկացվեն լրացուցիչ ռեսուրսները՝ նոր ֆունկցիոնալ հնարավորությունները սահմանելու, իրականացնելու և փորձարկելու համար:
- Եթե ՎԲՌ ընդգրկումը ընդլայնվի, ըստ վերը նշվածի, ընթացիկ պահպանման աշխատանքները, համանման պայմաններում կավելանան և առաջարկվում է, որ ՀՀ ԱՎԾ –ն ի դիտարկի, թե արդյոք վիճակագրական ճյուղային գրասենյակների աշխատակիցները (այսինքն ՎԲՌ սպառողները) կարող են նպաստել որակի ապահովմանը և ինչպես կարելի է դա իրականացնել:

Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն

Բազիսային չափում՝

- Հաշվի առնելով առկա ժամանակահատվածը և ՀՀ ԱՎԾ-ի ներկայիս փորձը կապված ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության հետ, առաջարկվում է իրականացնել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության բազիսային չափումը սահմանափակ թվով ձեռնարկությունների հիման վրա: Այսպիսով, առաջարկվում է ՀՀ ԱՎԾ-ին հետևյալը՝
    - Ընտրել ներկայացուցչական հետազոտություններ, ամսեկան, եռամսյակային և տարեկան՝ յուրաքանչյուրից երկուական, այսպիսով ընդհանուր առմամբ վեց հետազոտություն:

- Սահմանել ձեռնարկությունների չափային երեք խմբեր՝ ըստ ՎԲՌ-ում գրանցված աշխատակիցների թվաքանակի:
- Ընտրել հինգ ձեռնարկություններ ներկայացուցչական հետազոտությունների յուրաքանչյուր 18 կապակցություններից և չափային խմբերից, որն ընդհանուր կազմում է 90 ձեռնարկություն:

Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման հաշվարկ

- Անհրաժեշտ է որոշել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման *ընդհանուր* մեթոդը: Սա համարվում է շահագրգիռ ձեռնարկություններից համապատասխան տեղեկատվության հավաքագրման նախապայմանը: Ծանրաբեռնվածության հաշվարկը պետք է իրականացվի պարզ բանաձևի միջոցով, որպեսզի նվազեցվի առաջադրանքի հետ կապված աշխատանքները: Ուստի, առաջարկվում է, որ ՀՀ ԱՎԾ այդ հաշվարկի համար կիրառի ստորև բերված մոդելը՝

Օգտագործված ռոպեներ x հաճախականություն x տարեկան հաշվետվությունների քանակը = տարեկան ծանրաբեռնվածությունը՝ ըստ ռոպեների
Տարեկան ծանրաբեռնվածությունը ըստ ռոպեների x մեկ անձի ժամային վճարը =Ընդհանուր ծանրաբեռնվածությունը ՀՀ դրամով

- Չափումը պետք է ներառի միայն այն հետազոտությունները, որոնք պարտադիր պետք է լրացվեն համաձայն ՀՀ օրենսդրության: Այս մոդելը միջազգային ստանդարտ մոտեցում է, որը համապատասխանում է <<Ստանդարտ ծախսերի մոդելի>> ուղեցույցներին:

4. Հաջորդ գործունեությունից (Բ2) առաջ իրականացվող քայլեր

Բիզնես ռեգիստր

1. Բ.1 գործունեության ընթացքում ծագած հարցերի պարզաբանում

- Որ փոփոխականերն են գրանցված՝

  - Անհատ ձեռնարկատերերի իրավունքների ռեգիստրում (Իրավաբանական անձանց Պետական ռեգիստր (բաց բաժնետիրական ընկերություններ , Արդարադատության նախարարություն))
  - Հարկային ռեգիստրում
  - Մաքսային ռեգիստրում
  - Պետական և համայքային ռեգիստրում – (ՀՀ Գանձապետարան)
  - Զբաղվածության և գործազրկության ռեգիստրում (ՀՀ Զբաղվածության պետական ծառայություն)

Հատկապես, անհրաժեշտ է հետևյալ տեղեկատվությունը՝

- Ռեգիստրին հատուկ նույնականացման համար
- Այլ ռեգիստրների որ նույնականացման համարներն են ընդգրկված հատուկ ռեգիստրում
- Անվանումը
- Հասցեն (տեսակը և որակը)
- Հեռահաղորդակցման տվյալներ (հեռախոս, ֆաքս, էլ փոստ)
- Գործունեության մասին տեղեկատվություն, ՀՀ ԱՎԾ-ի ունեցած Nace դասակարգչից տարբերվող տարբերակով
- Իրավաբանական ձևերի վերաբերյալ տեղեկատվություն
- Շրջանառության մասին տեղեկատվություն (տարեկան, եռամսյակային, ամսեկան)

- Աշխատակիցների մասին տեղեկատվություն (քանակ, կամ անհատական ցուցանիշներ; հաշվարկել տրամադրվող օրվա ցուցանիշներին համաձայն կամ որպես ժամանակահատվածի (ամիս/տարի) միջին, ինչպես է սահմանված տեղեկատվությունը)

- Գրանցման/դադարեցման ամսաթիվ

Հետաքրքիր է իմանալ, թե որքան հաճախակի են արդիականացվում յուրաքանչյուր տեղեկատվության տեսակները:

Հետաքրքիր է իմանալ, արդյոք տեղեկատվությունը ընդգրկված է, թե իրավական մակարդակում և թե տեղական մակարդակում:

Հնարավոր է թարգմանել ընդունված օրենքների համապատասխան հոդվածները անգլերեն լեզվով: Ներկայացված է ստորև:

- Որտեղ է ընդգրկված գրանցված մասնավոր ձեռնարկությունների մասին տեղեկատվությունը (անհատ ձեռնարկատեր): Ինչպիսի փոփոխականներով: Ինչպես է գրանցվում տեղեկատվությունը: Հայտնի է արդյոք որակի վերաբերյալ որևէ տեղեկատվություն:

- Որտեղ է գրանցվում պետական սեկտորի միավորների մասին տեղեկատվությունը: Ինչպես են սահմանվում միավորները: Ինչպիսի փոփոխականներ են գրանցված, ինչպես է գրանցված տեղեկատվությունը : Հայտնի է արդյոք որակի վերաբերյալ որևէ տեղեկատվություն:

- Արդյոք այդ տեղեկատվության մուտքը սահմանափակված , եթե այո, ապա ինչպես:

- Ինչպես է տրամադրվում տեղեկատվությունը

- Ինչպես են բիզնեսների տարբեր կատեգորիաները սահմանվում հարկային ռեգիստրում : Կա արդյոք տեղեկատվություն անհատ ձեռնարկությունների շրջանառության մասին:

2. Ցուցանիշների ճշգրտում

- Պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձանց թիվը կազմում է մոտավորապես 15.000: Արդյոք այդ բոլոր միավորները գրանցված են Վիճակագրական բիզնես ռեգիստրում :

- Մասնավոր ձեռնարկությունները գրանցված են իրավաբանական անձանց պետական ռեգիստրում: Այս ձեռնարկությունների թիվը հստակ չէ –առաքելության ընթացում նշվել են տարբեր ցուցանիշներ: Այնուամենայնիվ, դրանց ընդամենը փոքր չափաբաժինն է ընդգրկված վիճակագրական բիզնես ռեգիստրում:

3.Առկա ***փաստաթղթերի*** հավաքագրում և թարգմանություն

- Համապատասխան իրավական տեքստերը (անգլերեն լեզվով) վարչական տվյալներին ՀՀ ԱՎԾ-ի մուտքերի մասին;
- Ներկայիս վիճակագրական բիզնես ռեգիստրի տվյալների մոդելը; (Դանիայի վիճակագրությունը կներկայացնի ուղեցույց՝ ցույց տալու համար, թե ինչ է անհրաժեշտ)
- Իրավաբանական անձանց պետական ռեգիստրից գրանցման գործունեության հասցեների արդիականացման գործընթացի նկարագրում, հարկային ռեգիստրից և հետազոտություններից ստացված տեղեկատվությամբ արդիականացման նկարագրությունը
- Առցանց հարցման համակարգի նկարագրություն

ԱՊ Փորձագետներին պետք է նախքան հաջորդ Բ2 գործունեության սկիզբը նախապես 2 շաբաթ առաջ ներկայացվի գրավոր կարծիք/ փաստաթղթեր 1, 2 և 3 կետերի վերաբերյալ

4.Որոշում ընդլայնված ընդգրկման վերաբերյալ

- Սկզբունքային որոշում մասնավոր ձեռնարկությունները և պետական սեկտորի միավորները վիճակագրական բիզնես ռեգիստրում ընդգրկելու վերաբերյալ՝ – պետք է վերջնականապես իրականացվի, երբ կհամաձայնեցվի վարչական տվյալների հասանելիությունը
- Սկզբունքային որոշում ՎԲՌ-ում տեղական միավորները ընդգրկելու վերաբերյալ վերջնականապես կիրականացվի Թվինինգ ծրագրի ավարտից հետո

- Պահանջված տեղեկատվության որոնում՝
  - Անհատ ձեռնարկատերերի իրավունքների ռեգիստր (Իրավաբանական անձանց Պետական ռեգիստր (բաց բաժնետիրական ընկերություններ Արդարադատության նախարարություն)
  - Հարկային ռեգիստր

5. **արտաքին շփման**/“լոբբինգի” նախաձեռնություն

- Համագործակցել բոլոր համապատասխան անձանց հետ, որոնց հնարավոր է հավաստիացնել

- Կրկին հրավիրել բարձրաստիճան շահառուներին Դանիայի համակարգի ներկայացման համար

Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն

- Պետք է ընտրվեն ներկայացուցչական հետազոտություններ և սահմանվի ձեռնարկությունների նպատակային խումբ՝ բազիսային չափումները իրականացնելու համար

Հարկավոր է որոշել, թե ինչպես պետք է հավաքագրել ձեռնարկությունների կողմից հարցաշարերը լրացնելու համար օգտագործված ժամանակի վերաբերյալ տեղեկատվությունը, օրինակ՝ հեռախոսազրույցի միջոցով, կամ առանձին հարցաշարի միջոցով: Տեղեկատվությունը պետք է հավաքագրվի անմիջապես համապատասխան ձեռնարկություններից: ՀՀ ԱՎԾ նախընտրում է առանձին հարցաշարի տարբերակը: Հնարավոր լրացուցիչ հարցաշարի օրինակը ներկայացված է հավելված 7.C-ում.

- Հարցվողների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու աշխատանքը մարտահրավեր կհանդիսանա և կփոփոխի ՀՀ ԱՎԾ-ի աշխատանքային սահմանված ընթացակարգը: Կառուցվածքային ներդրումը ապահովելու համար անհրաժեշտ է՝
  - Որոշել հարցվողների ծանրաբեռնվածության բազիսային չափումների աշխատանքներին առնչվող կազմակերպչական կառուցվածքը
  - Որոշել այն ոլորտները, որոնք ենթակա են ադմինիստրատիվ ծանրաբեռնվածության առավել մանրամասն վերլուծությունների: Այս ոլորտները կախված են բազիսային չափման արդյունքներից;

Հավելված 1. Տեխնիկական Առաջադրանք

Գործունեություն Բ 1 և Բ 3.1 Հարցերի պարզաբանում

1. Գործունեության նպատակը

Գործունեության նպատակը ներառում է՝

- ՀՀ ԱՎԾ –ի գործող Բիզնես Ռեգիստրի գնահատում
- ՀՀ ԱՎԾ –ի Բիզնես Ռեգիստրի միավորի մակարդակների կառուցվածքի գնահատում
- ՀՀ ԱՎԾ –ի Կառուցվածքային Բիզնես Հետազոտության ներկայիս հաշվետվական ձևերի գնահատում
- Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման մեթոդաբանությունների քննարկում
- ՀՀ ԱՎԾ Բիզնես Ռեգիստրի արդիականացման հեռանկարների և հնարավորությունների քննարկում՝ վարչական ռեգիստրների տվյալների միջոցով և ակնկալվող հնարավոր օգուտները
- Քննարկել, թե որոնք են Բիզնես Ռեգիստրի վերաբերյալ Եվրոպական Միության կանոնակարգերը, առաջարկները, ստանդարտները և վերջիններս ինչ կարող են ենթադրել ՀՀ ԱՎԾ –ի համար
- Տեղեկությունների տրամադրում և հնարավորության դեպքում արտաքին շահառուների ներգրավում այդ աշխատանքում:

2. Ակնկալվող արդյունքը և գործողությունները

Գործողությունների ակնկալվող արդյունքները հետևյալն են `

- ՀՀ ԱՎԾ –ի առկա Բիզնես Ռեգիստրի վերլուծություն
- Կառուցվածքային Բիզնես Հետազոտության առկա հաշվետվական ձևերի վերլուծություն
- Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման վերաբերյալ ՀՀ ԱՎԾ –ի խնիրների պարզաբանում և չափման համար առկա տվյալների աղբյուրների մշակում
- Արտաքին շահագրգիռ կողմերի իրազեկում աշխատանքների վերաբերյալ
- Հաջորդ գործունեության աշխատանքային ծրագրի մշակում (Բ2)
- Հաջորդ գործունեության նախընտրելի ժամանակի որոշում (Բ2)

3. Ծրագրի մասնակիցները

Պրն. Գագիկ Անանյան, Վիճակագրության Խորհրդի Անդամ *(ՇԵ Բաղադրիչի ղեկավար)*
Պրն. Աշոտ Անանյան, Արդյունաբերության Վիճակագրության բաժնի ղեկավար
Պրն. Գեորգի Թորոսյան, Տրանսպորտի և Կապի Վիճակագրության բաժնի ղեկավար

Մարիամ Պետրոսյան, Շինարարության Վիճակագրության բաժնի ղեկավար
Անահիտ Հարությունյան, Առևտրի և այլ Ծառայությունների Վիճակագրության բաժնի ղեկավար

Պրն. Սորեն Շյոննինգ Անդերսեն, Արտաքին Առևտրի և Վճարային Հաշվեկշռի բաժնի ղեկավար, Դանիայի Վիճակագրություն (ԱՊ Բաղադրիչի ղեկավար)
Պրն. Քարստըն Զորնիգ, Տվյալների Հավաքագրման և Մեթոդաբանության բաժնի պետի տեղակալ, Դանիայի Վիճակագրություն
Վիբեկը Սկով Մուլլեր, Բիզնես Ռեգիստրի Գլխավոր Խորհրդատու, Դանիայի Վիճակագրություն
Աշու Քոնրադ, Տվյալների Հավաքագրման և Մեթոդաբանության Ավագ Խորհրդատու, Դանիայի Վիճակագրություն

Արտաքին շահառուներ, որոնք մասնակցում են գործունեությանը

ՀՀ Արդարադատության Նախարարության Ձեռնարկությունների պետական ռեգիստր, Պետական Եկամուտների Կոմիտե, Հարկային Ռեգիստր, Էներգետիկայի և Բնական պաշարների նախարարություն, Քաղաքաշինության նախարարություն, Տրանսպորտի և Կապի Նախարարություն, Երևանի քաղաքապետարան, Մարզպետարաններ, Քաղաքացիական Ավիացիայի Գլխավոր վարչություն, Ճանապարհառստիկանային Վարչություն

Հավելված 2. Առաքելության այցելության ծրագիրը 28 Մարտի -1 Ապրիլի, 20111

Ժամը	Վայրը	Միջոցառում	Նպատակը/մանրանասները
Երկուշաբթի առավոտյան	Կոնգրես հյուրանոց	Հանդիպում ԹՄԽ-ի հետ	Շաբաթվա ծրագրի քննարկում
Երկուշաբթի Կեսօրն	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ Բաղադրիչի ղեկավարի և փորձագետների հետ	ՀՀ ԱՎԾ –ի Բիզնես Ռեգիստրի գործունեության վերլուծություն՝ ներառյալ Կառուցվածքային Բիզնես Հետազոտության օգտագործումը որպես արդիականացման աղբյուր
Երեքշաբթի Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Սեմինար	ԱՊ փորձագետների պրեզենտացիաներ և քննարկումներ՝ ԵՄ Բիզնես Ռեգիստրի ստանդարտների վերաբերյալ
Երեքշաբթի կեսօրին	ՀՀ ԱՎԾ ՀՀ ԱՎԾ	Հանդիպում Մեթոդաբանության բաժնի հետ Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության տարբեր հարցերի ներկայացում և ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման հնարավորությունների քննարկումՔննարկել և պլանավորել արտաքին շահառուների համար պատրաստված հաջորդ օրվա սեմինարի հարցերը
Չորեքշաբթի առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Սեմինար արտաքին (հավանական) տվյալների մատակարարների հետ	Ներկայացնել թե ինչպես է կազմակերպվում և արդիականացվում Դանիայի ՎԲՌ-ը: ՀՀ ԱՎԾ-ի ՎԲՌ-ի առաջիկա զարգացումների քննարկումներ:
Չորեքշաբթի կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում Մեթոդաբանության և ՎԲՌ-ի բաժինների հետ Հանդիպում ԱՊ բաղադրիչի ղեկավարի հետ	Կառուցվածքային Բիզնես Հետազոտության հաշվետվական ձևերի վերլուծություններ՝ կենտրոնանալով *բովանդակության /փոփոխականների* վրա: ՀՀ ԱՎԾ-ի նպատակների պարզաբանում կապված ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման և առկա տվյալների աղբյուրների վերաբերյալ:
Հինգշաբթի	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում Տրանսպորտի վիճակագրության բաժնի հետ	Տրանսպորտային հետազոտության տարեկան հաշվետվական ձևերի քննարկում: Սխալների ուղղման և այլ գործընթացների քննարկում:

		Հատուկ հանդիպումներ	Ներդրում զեկույցի պատրաստման մեջ
Ուրբաթ առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հատուկ հանդիպումներ	Ներդրում զեկույցի պատրաստման մեջ
Ուրբաթ առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հատուկ հանդիպումներ	Ներդրում զեկույցի պատրաստման մեջ
Որբաթ կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Բրիֆինգ ՇԵ ծրագրի ղեկավարի հետ	Եզրահանգումներ, որոշումներ և դրանց հետևանքները առաջիկա գործողությունների համար և ՇԵ փորձագետների համար կիրառելի աշխատանքային ծրագիր:

Հավելված 3. Անձինք, որոնց հետ հանդիպումներ են տեղի ունեցել;

Պրն. Գագիկ Անանյան, Վիճակագրության Խորհրդի Անդամ (ՇԵ Բաղադրիչի ղեկավար)
Պրն. Աշոտ Անանյան, Արդյունաբերության Վիճակագրության բաժնի ղեկավար
Պրն. Գեորգի Թորոսյան, Տրանսպորտի և Կապի Վիճակագրության բաժնի ղեկավար
Մարիամ Պետրոսյան, Շինարարության Վիճակագրության բաժնի ղեկավար
Անահիտ Հարությունյան, Առևտրի և այլ Ծառայությունների Վիճակագրության բաժնի ղեկավար

Լիլիթ Պետրոսյան, Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժին
Լաերտ Հարությունյան, Բիզնես ռեգիստրի բաժին

Սեմինարի մասնակիցներ

Արտաքին շահառուներ, որոնք մասնակցում են գործունեությանը

Պետեկամուտների կոմիտե, Սերգեյ Պատուրյան, Տվյալների հոսքերի կառավարման բաժնի պետ
Թվինինգ ծրագիր, Ստանդարտ Ծախսերի Մոդել, Նինա Նիվա, ԹՄԽ
Երևանի քաղաքապետարան
Ճանապարհոստիկանային Վարչություն
Քաղաքացիական Ավիացիայի Գլխավոր վարչություն,
Քաղաքաշինության նախարարություն,
ՀՀ Արդարադատության Նախարարության Ձեռնարկությունների պետական ռեգիստր

ՀՀ ԱՎԾ –ի աշխատակիցներ՝

ՀՀ ԱՎԾ ՎՊԽ-ի անդամներ
ՀՀ ԱՎԾ Բիզնես ռեգիստրի բաժին
ՀՀ ԱՎԾ Միջազգային համագործակցության բաժին
ՀՀ ԱՎԾ Աշխատանքի վիճակագրության բաժին
ՀՀ ԱՎԾ Արդյունաբերության վիճակագրության բաժին
ՀՀ ԱՎԾ Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժին
ՀՀ ԱՎԾ Շինարարության վիճակագրության բաժին
ՀՀ ԱՎԾ Տրանսպորտի և կապի վիճակագրության բաժին
ՀՀ ԱՎԾ Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչություն

Հավելված 4: ՎԲՌ փաստերի հավաքագրման ամփոփում և ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցում

Նպատակը

Սույն հավելվածի նպատակն է ամփոփել ՀՀ ԱՎԾ-ի ներկայիս ՎԲՌ իրավիճակի եզրակացությունները և ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցումը, որոնք այս բաղադրիչի երկու հիմնական տեսակատներն են:

Այս հարցերից յուրաքանչյուրի համար, որոնք քննարկվել են ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցների և ղեկավարների հետ, ստորև նշվում են պատասխանները/եզրակացությունները կարմիր տեքստով:

Ա. Վիճակագրական Բիզնես Ռեգիստր (ՎԲՌ)

1. Իրավական հիմքեր

1.1. Որոնք են ՎԲՌ-ի վարման իրավական հիմքերը: Արդյոք սա ամբողջությամբ նույնն է ՀՀ ԱՎԾ-ի համար, թե այն ունի առանձին իրավական հիմքեր:

ՎԲՌ վարվում է այն նույն իրավական հիմքերով, ինչպես ՀՀ ԱՎԾ-ի բոլոր գործողությունները: Օգտակար կլինի ունենալ համապատասխան իրավական տեքստերը անգլերեն լեզվով հնարավորինս շուտ, որպեսզի առավել հասկանալի լինեն օրենսդրությամբ ընձեռնված հնարավորությունները:

.

2. ՎԲՌ –ի համար բովանդակությունը և տվյալների աղբյուրները

2.1 Ունի արդյոք ՀՀ ԱՎԾ-ն ՎԲՌ-ի տվյալների մուտք արտաքին ռեգիստրներից:

- Ադմինիստրատիվ ռեգիստրներ – որոնք են դրանք:
- Կոմերցիոն գրանցումներ – որոնք են դրանք:

ՀՀ ԱՎԾ ստանում է քաղվածքներ <u>երկու ադմինիստրատիվ ռեգիստրներից.</u>

Նախ, ՀՀ ԱՎԾ ստանում է տվյալներ Իրավաբանական անձանց Պետական ռեգիստրից, որը գտնվում է Արդարադատության նախարարության ենթակայության ներքո: Այս ռեգիտրի քաղվածքը, որն այն վայրն է որտեղ իրականացվում է բիզնեսների առաջնային գրանցումը, ընդգրկում է մոտավորապես 15.000 իրավաբանական միավորներ:

Գործնականում դրանք բոլորն էլ ընկերություններ են, այսինքն բաց բաժնետիրական ընկերություններ:

Երկրորդ, ՀՀ ԱՎԾ ստանում է տվյալներ Հարկային մարմնից: Քաղվածքը ընդգրկում է նույն ձեռնարկությունները, որոնք նաև ընդգրկված են Իրավաբանական անձանց Պետական ռեգիստրում:

Բացի նույնականացման համարից, անունից, հացսեից, հեռախոսահամարից, ստեղծման/դադարեցման ամսաթվից, հիմնադիր անձի (անձանց) իրավաբանական ձևից և անվանումից/հասցեից, երկու ռեգիստրների փոփոխականները ներկայումս այդքան էլ հասկանալի չեն ԱՊ փորձագետներին և անհրաժեշտ է տեսնել փոփոխականների ցանկը (փոփոխականների արժեքների ցանկը): ԱՊ Փորձագետներն ունեն այնպիսի տպավորություն, որ հավանաբար այս երկու արտաքին ռեգիստրների ավելի շատ փոփոխականները կարող են արժեք կներկայացնել ՎԲՌ-ի համար:

Զարմանալի չէ, որ այս երկու լրացուցիչ աղբյուրների օգտագործումը առաջացնում է պահպանման խնդիրներ՝ կապված միավորների և տվյալների համապատասխանության հետ: Այս երկու աղբյուրների միջև առաջնահերթ/գերադասելի կանոնների առկայությունը (բնույթը) առայժմ հայտնի չէ ԱՊ փորձագետներին:

Կարևոր օրինակներից մեկը, երբ տվյալները երբեմն հակասում են, կապված է հասցեների հետ (շրջանի_կոդ/ինդեքսի_կոդ, փողոցի_անուն (ազատ տեքստային ֆորմատով) և բնակարանի_համարը): Պետք է նշել, որ հասցեների համապարփակ ամբողջական թվային կոդերի բացակայությունը ենթադրում է, որ հասցեների վավերականության ավտոմատ տրամաբանական ստուգումները հնարավոր չեն:

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրը գրանցում է ինչպես պաշտոնական, այնպես էլ գործունեության հասցեները, միչդեռ Հարկային ռեգիստրը գրանցում է միայն այն հասցեն, որտեղ ծավալվում է գործունեությունը: Նույնիսկ եթե գործունեություն է իրականացվում մի քանի վայրերում, միայն մեկ հասցեն է գրանցվում: ՀՀ ԱՎԾ –ի ՎԲՌ –ում գրանցվում են այս երկու հասցեներն էլ: Հարկային ռեգիստրից ստացված գործունեության հասցեն օգտագործվում է միայն այն դեպքում, եթե նման հասցե չի ստացվել Իրավաբանական անձանց պետական ռեգիստրից:

Ձեռնարկությունների անվանումները հաստատվում են Էկոնոմիկայի նախարարության ենթակայության տակ գտնվող անվանումների առանձին ռեգիստրով: Որոշում է իրականացվել կիրառելու <<մեկ պատուհանի սկզբունքը>> և այդ իսկ

պատճառով անվանումների ռեգիստրը փոխանցվել է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրին:

ՎԲՌ բաղկացած է հնգանիշ գործունեության կոդերից, որը հանդիսանում է ազգային NACE 2 խմբ. դասակարգիչի ենթաբաժինը: Կոդերը տրվում են տարեկան արդիականացման հետազոտության հիման վրա, երբ ՎԲՌ բոլոր միավորները պետք է տեղեկություններ ներկայացնեն շահույթի և զբաղվածության վերաբերյալ մինչև հինգ գործունեությունների համար, որպեսզի որոշվի, թե որն է հիմնական գործունեությունը: Տես նաև 2.7 կետը ստորև:

ԱՊ փորձագետներին տեղեկացվեց, որ բիզնեսների համար չկա որևէ պարտավորություն՝ կապված ռեգիստրում իրենց այն տեղեկատվության թարմացման հետ, որն այլևս վավեր չէ: Արտաքին արդիականացումները այսպիսով հիմնված են բացառապես Պետական ռեգիստրի և Հարկային ռեգիստրի ադմինիստրատիվ առաջադրանքների վրա:

Ակնհայտ է, որ սերտ և լավ հարաբերությունները ՀՀ ԱՎԾ –ի և այդ երկու պետական մարմինների միջև շատ կարևոր են: ՀՀ ԱՎԾ –ն կարող է նպաստել ստանդարտացված սահմանումների գիտելիքների առումով, որոնք օգտակար կլինեն բոլոր ադմինիստրատիվ ռեգիստրների համար, և ՀՀ ԱՎԾ ցանկանում է մանրակրկիտ ուշադրություն դարձնել ԵՄ կիրառվող սահմանումներին:

Չկա կոմերցիոն տվյալների որևէ ձեռք բերում կամ օգտագործում:

2.2 Ունեն արդյոք ադմինիստրատիվ ռեգիստրներից ոմանք (օրինակ հարկային ռեգիստրը) տվյալներ տնտեսական գործունեության մակարդակի վերաբերյալ (շրջանառություն և կամ/ զբաղվածություն):

Հարկային ռեգիստրը պահում է տվյալներ հարկային վճարումների վերաբերյալ: Բիզնեսները բաժանվում են տարբեր կատեգորիաների: Որոշ փոքր բիզնեսներ վճարում են միայն որոշակի ֆիքսված գումար: ՎԲՌ-ին հայտնի չեն այդ կատեգորիաները: Հայտնի չէ, թե այդ թվերը որքանով են արտացոլում տնտեսական գործունեության մակարդակը (շրջանառությունը):

2.3 Ինչպիսի նույնականացումներ են օգտագործվում (նույնականացման ID համար(ներ), անվանում և այլն) ադմինիստրատիվ ռեգիստրներում: Արդյոք դրանք օգտագործվում են նաև ՎԲՌ-ում:

Պետական ռեգիստրը կիրառում է երկու նույնականացումներ.

- Պետական ռեգիստրի համարը, որը պատահական թվային կոդ է և մնում է անփոփոխ ձեռնարկության ողջ գործունեության ընթացքում:

